

Փ Ո Թ Ո Ր Ի Կ Ը

Նաւը մոնշաց երկար ու ցաւադին, ծուխ ու մօւր արձակեց դէպի վեր, ապա ընդհատ-ընդհատ տնքոցով առաջ շարժուեց դէպի ծովային փախչող հօրիզոն-ները։ Նրա ցոռւկի տակ պատառ-պատառ ալիքները մոմում էին ծեծուող գաղանների պէս, գալարւում, փրփրում, իրար բաշքում, անօդուտ զայրոյթ ով իրար կրծոտում և ապա ոռնոցով ու հեծեծանքներով դուրս էին փախչում հակառակ կողմից։ Նաւը շարունակում էր իր ընթացքը տարերային անհոգութեամբ, որպէս փշող, կոյր ճակատագիր, անցնում էր յաղթանակով, բայց նոյնպէս տնքոցով ու հառաջանքով, որպէս ալիքները։ Ծովի անհունութեան մէջ սկսուած մի խոլ պայքար էր այն, ուր յաղթողն ու պարտութիւն կրողը կարծես հաւասարապէս դժբախտ էին և չդիտէին՝ թէ ինչ են անում։

Եւ ափերը...

Հեռնւ, վաղորդեան մշուշի մէջ նրանք կամաց-կամաց մաշւում, լուծւում էին՝ ծառ ու թումբ, ժայռ ու բլուր մանրանում էին ու սպրդնում և ապա կամաց-կամաց թաղլում մի ամենակուլ անդունդի մէջ, որ մի աներեսոյթ ձեռք շտապ-շտապ բաց էր անում մեր յետեսում մեր թողած աշխարհը թագելու համար։

Եւ լաւ էր, որ այդպէս էր...

Զգիտեմ ինչ էին մտածում իմ ուղեկիցները, բայց ես փախչում էի այդ ափերից անէծքով ու զայրոյթով։ Եւ նզովքի ու զայրոյթի արժանի ռբքան բան կար այնտեղ, Տէ՛ր Աստուած։ Եւ գաղաղուած, յաւիտենականա-

պէս դժգոհ դէմքեր, որոնք դազաններ են թագցնում իրանց յղկուած, փայլուն արտաքինի տակ, և շարունակ պահանջող, անողորմ աչքեր, ուր իմացականութիւնը անդամ գիշատիչ է, և՝ արցունք, և՝ բրտինք, և՝ լափող ախորժակ ու անառակ բրբիջներ, տրորուած մէջքեր, անյօյս ու անտէր գոյութիւններ թունոտ, աւերիչ կըրքերի ու փշրուած, տառապալից կեանքերի մի աշխարհ էր այն, որ թաղւում էր հսկայական անդունդի մէջ։

Նայում էի և զոհ էի, որ հորիզոնի տակ թաղւում են ափերը, թաղւում է նզովուած աշխարհը, որից փախչում էր մեր նաւը։

Ամեն ինչ ծածկուեց. Թայ անորոշ հեռուն, ուր ամենքը դարձեալ մի բան էին փնդրում անթարթ հաշյացքով։ Եւ հեռուն աշնանային մուայլ երկինքն էր, որ ծարաւի հրէշի պէս կախուել էր լայնարձակ ծովի վրայ՝ կարծես նրա ջրերը անյաղօրէն ծծելու համար մինչեւ վերջին կաթիլը։

Ամպեր, ամպեր... մեծ ու փոքր, սև ու դորշ, նօթոտ ու խոժոռ, և ամենքը մուայլ, ամենքը լալկան, քաշքշուել էին իրարից, փաթաթուել, գրկուել էին իրար հետ, սողում էին ալիքների վրայից, լիզում էին նրանց փրփրուն բաշը կամ մեղմիւ փափսում ծովի հետ ասես որոճալով մի մութ բան ճամբորդների դէմ։

Նաւը մեծ էր, կուրծքը՝ յաղթ, կազմուածքը՝ կուռ, և ճակատը խրոխտ. նրա ամբողջ պատկերը մի ըմբառտ բան ունէր իր մէջ, որ հաւատ էր ներշնչում, բայց և այնպէս ամենքս ճնշուած էինք մի աներեսոյթ բեռի տակ, ամենքս նրա հետ միասին խուլ տնքում էինք առանց իրար հաղորդելու մեր ներքին զգացմունքը։ Մենք դադանի կերպով ապրում էինք ծովի և նաւի մէջ կատարուող պայքարը, լսում, հասկանում էինք ամպերի սպառնալի փափսոցը և անհանգիստ էինք ու ոշնչացած։ Եւ այդ սչնչութիւնը մեր խեղճութեան, մեր անզօրութեան վրայ իշնում էր բարձունքներից, անհասկանալի անհունից, որի մէջ դողում էինք Լալկան ու

գորշ երկինքը բարդ-բարդ դիզել էր մեր գլխին իր ամպերը, սղմում էր մեղ ասես ալիքների տակ թաղելու համար։ Երկինքի բեռը մեղ ծանր էր գալիս. բայց նաւը գնում էր ու տանում մեր ընկճուածու թախծոտ գլուխները հեռու, հեռու...

Ամենքը տախտակամածի վրայ էին և կարծես մի մի բեռ էին տանում դէպի օտար հորիզոնները։ Նայում էի այդ քարացած դէմքերին, և ինձ թւում էր թէ ամենքը փախել են ափերից լայնարձակ ծովում ցրելու իրանց հոգու անորոշ թախիծը։ Սակայն այս անհունութեան մէջ անգամ հոգին թեթևացնելու տեղ չկար, այստեղ էլ երկինքն էր սղմում, նրա զօրի տակ ծովը էր տնկում, և ալիքները հեկեկում էին ցաւով։

Անլոյս ու խաւարամած երկնքի տակ բոլորի դէմքերը կապարի գոյն էին ստացել, գորշ ալիքների մռայլ արտացոլումները խաղում էին նրանց վրայ, և մարդիկ շարունակում էին նայել դէպի հեռուն մեռելատիպ ոգիների պէս։ Ափերը թաղուեցին հորիզոնի տակ՝ տանելով իրանց հետ ծանօթ կեսնքի պատկերները՝ հեռուն անորոշ էր ու մռայլ, երկինքն ու ծովը սպառնալից էին, և տախտակամածի վրայ կանգնած մարդիկ դժգոհ էին մի բանից, որ իրանք բացատրել չէին կարող։ Լուռ էին ամենքը և նայում էին մերթ դէպի երկինք, մերթ դէպի հեծեծող ալիքները և մեծաւ մասամբ այնտեղ, ուր ափերը կորան։

Ուհի այդ ափերը... միթէ անկարելի էր նրանցից ազատուել, ով է մեր ճակատագիրը բևեռել հողին, ո՞վ է մեր ճակատը կախել գետնին, բժացրել մեր հայեացը, մեր մտքի թևերը փետել։ Դժգոհ էի ափերից, տառապել էի այնտեղ, — միթէ ամենքն էլ չեն տառապում — անձկութեամբ էի սպասում այն վայրկեաննին, երբ կը կարողանամ ազատուել նրանցից, տարուել լայնարձակ ջրերի վրայ, ուր անսանձ հովերն են խաղում և ալիքները մռմռում իրանց յաւետենական երգը։ Հոգիս տենչում էր մեծն ու անսահմանը, ուր ամեն ինչ, անգամ աւերմունքը գեղեցիկ է, այն՝ որ ափ չունի և ոչ

շափ. և այժմ վերստին ես նոյն ատելի ափերն էի փնդրում թախծոտ հայեացքով. Ես մենակ չէի, ամենքը դէպի այն կողմն էին նայում, ուր քիչ առաջ կորան աւ փերը յուղարկաւոր հանդիսաւորութեամբ:

Ես հաւատացած էի, թէ բոլոր իմ ուղեկիցներն էլ ինձ պէս են, ամենքն էլ խոյս են տուել ափերից նղովքով ու զայրոյթով և այժմ ցաւով են յիշում իրանց թողած վայրերը, անթարթ հայեացքով փնդրում են մի ծառ, մի շէնք, ծիսի մի ոլորտ, որ կեսանք ու աշխարհ յիշեցնէր: Յաւիտենապէս դժգոհ ու անիծուած ոգին էր մասսաս ապրում մեր մէջ, մենք փախչում էինք ոչ միայն ափերից, այլև մեղնից, իրարից և անկարող էինք աղաւուել:

Ափերը, ափերը... մենք ամենքս մի աննիւթ թերով կապուած էինք նրանց հետ, մեր կարողութիւնից դուրս էր կարտել այդ զարմանալի շղթան, որ օղակօղակ վիշապի պէս պարփակել էր մեր էութիւնը: Անդամ այս խենթ ծովի վրայ, ուր հողմերը սանձ չունին և ալիքները դադար, ուր ամեն ինչ յաւիտենական է և վըսեմ, անդամ այստեղ ափերը կարծես մեղ հետեւում էին քայլառքայլ դարշանքով, սճիրներով ու ախտերով բեռնաւորուած մի կարաւանի պէս: Անհունը երազելու փոխարէն մեր միտքը անդադար ծալւում էր դէպի հողը, և մեր երեւակայութիւնը ներքեւում որսը փնդրող թռչնի պէս շարունակ դէպի հողն էր նայում, դէպի այն նղովուած ափերը, ուր արցունքն առատ է, ժամկետը գունատ և ցաւը միշտ խորունկ, ուր մի խօլ պայքարի մէջ մարդկային բիւրաւոր էակներ կրծոտում են իրար և ուր այնպէս դժբախտ են և՛ նրանք, որոնք յաղթում են, և՛ նրանք, որոնք չգիտեն՝ ինչ ասել է յաղթանակի հաճոյք:

Ափերը, նղովուած ափերը մեղ կաշկանդել էին նաև այս անհունութեան մէջ, մենք կարօտում, մենք փնդրում էինք նրանց, իրարից ծածուկ հառաջում էինք նրանց համար և դժգոհ էինք, որ կախուած ենք երկրն-

քի և ծովի մէջ, որ էլ չենք տեսնում մեր հայեացքը ըթացնող, մեր երևակայութիւնը խեղդող աշխարհը:

«Փախիր՝ ուր ուզում ես, դարձեալ ափ պէտք է դուրս գաս», մտմտում էին ես մտախոհ քայլելով տախատակամածի վրայ յետ ու առաջ: Իմ ուշադրութիւնը գրաւեց մի փոքրիկ տասն-տասներկու տարեկան աղջիկ դունատ դէմքով, սև՝ ինչպէս ածուխ՝ աչքերով. նա յենուել էր նաւի եղրի վանդակապատին և անթարթ նայում էր դէպի վար՝ ասես աշխատելով դիտել սեփական պատկերը վճիռ ալիքների մէջ: Նրա գանգուր ու սև մազերը անխնամ ձեռվ կախվուել էին ճակատի և դէմքի վրայ, նրանց հետ խաղում էր հովը, մերթ ցրիւ էր բերում, մերթ կրկին հաւաքում, բայց աղջկայ փոյթը չէր, նա շարունակում էր անփոյթ կերպով նայել ջրերին, մերթ ժպտում էր, մերթ մնում մտախոհ ու երազուն: Այդ փխրուն, վտիա մարմինը, այդ սև ու գանգրահեր գլուխը, գունատ, անուշ դէմքը, երազուն աչքերը մի բան ունէին իրանց մէջ, որ այնպէս յիշեցնում էր ջրային ոգիս թւում էր, թէնա հէնց նոր դուրս է եկել ծովից և նայում է իր բոյրերին, ժպտում է նրանց: Ահա թէ ով էր անտարեր դէպի ափերը, —մտածեցի ես. - ամբողջ օրը նաւում ենք, և նա քաղցրութեամբ ժըպտում է ալիքներին. սև ու սպառնալի ամպերը կախուած են վերից, ալիքները մոմուում են ու փրփրում, նաւը տքնում է, բայց աղջիկը անհոգ կերպով նայում էր դէպի վար, ասես նա մի բան է տեսնում, որ մեզանից ոչոք չի տեսնում և ոչոք չի կարող հասկանալ:

Ես կամացուկ յօտեցայ, կանգնեցի նրա կողքին. նա գլուխը բարձրացրեց, փոքրիկ գունատ ձեռքով յետ տարաւ իր խոպոպները ու աչքերի հայեացքը մի վայրկեան յառեց ինձ վրայ և կրկին շարունակեց նայել դէպի վար. այնտեղ՝ վարում ալիքների փրփուրի մէջ մերթ ցոյց տալով իրանց ուռուցիկ մէջքերը և մերթ կորչելով ջրերի տակ՝ լողում էին բազմաթիւ մեծ ու փոքր ձկներ՝ նրանք աշխատում էին անպատ-

ճառ համել նաւին, քսուել նրա կողերին. նրանց էր նայում երեխան ու զուարձանում:

— Ծեսնում ես,—ասաց երեխան առանց վեր նայելու, —ինչ շատ են նրանք. վաղուց է, ինչ վազվում են նաւի յետևից. նայիր՝ ինչպէս կոխկուում են իրար, այս մեծը միշտ ամենից առաջ է վաղում, բոլորն էլ աշխատում են նաւի տակ մտնել, այդ ի՞նչ են փնդը-րում այդպէս:

— Ոչինչ, իմ փոքրիկ, նրանք բան չեն փնդրում, խաղում են ալիքների հետ:

— Զէ, նրանք գալիս են մեղ հետ, ես ճանաչում եմ, վաղուց է, նայում եմ, միշտ գալիս են, դիտես մենք ուր ենք գնում:

— Ո՞ւր:

— Մենք գնում ենք երկիր, դուրս կը դանք Տրապիզոն, տասոս այնտեղ է, մեղ սպասում է, այս դիշեր կը համենք այնտեղ, յետոյ կ'երթանք երկիր, այ, ձըկ-ներն էլ գալիս են մեղ հետ:

— Դուք գնում էք երկիր, ձկներն էլ գալիս են ձեղ հետ, բայց երբ դուք դուրս գաք ափը, ձկներն այնուամենայնիւ կը մնան ջրերում:

— Ինչու համար են մնում ջրերում, չեն մրսում և չեն խեղդուում:

— Ձեն մրսում և չեն խեղդուում, ձկներն այդպէս են, այդ նրանց երկիրն է, այնտեղ նրանք լողում են, աղատ են, ուրախ են:

— Երկիր չէ, ծով է,—դժգոհ եղանակով ուղղեց ինձ երեխան. — Երկիրը մերն է, դիտե՞մ՝ մեր երկիրը վաղուց չեմ տեսել:

— Եատ ես ուզում գնալ:

— Իսկի էլ չէ. հայրիկը ասում է՝ գնանք, և մենք գնում ենք, մայրիկն էլ է մեղ հետ, նա հիւանդ է, այ, այնտեղ պառկած է. տասոս կանչում է, մայրիկս ուզում է գնալ, շատ է ուզում, ես չեմ ուզում:

— Հապա դու ուր կ'ուզես մնալ:

—Այստեղ, այ, այստեղ էլ լաւ է.—Նա ձեռները փռեց դէպի ծովը.—այսպէս գնանք, գնանք, գնանք... մի լաւ տեղ, հեռու...

Երեխայի սև աչքերը վառուեցին, և գունատ դէմքը մի փոքր կարմրեց։ Նա այժմ նայում էր ինձ և ըսպասում, թէ ես ինչ կ'ասեմ, որ նա չի ուզում գնալ երկիր, այլ մի «լաւ տեղ», հեռու, հեռու, դէպի անծանօթ հորիզոնները։

Ես լուռ էի։

—Դու ուր ես գնում,—յանկարծ դարձաւ նա ինձ։ —Ե՞ս... ես այնպէս, գնում եմ հեռու, այ, այն կողմերը։ —Ես ձեռքս մեկնեցի դէպի մութ հորիզոնը։ Նա մնաց մտախոհ, կրկն գլուխը քաշ ձգեց և և դարձեալ նայում էր ջրերին։

—Աստղիկ, այ Աստղիկ, լսուեց նաւի երրորդ կարգի տախտակամածից մի հաստ ու խոպոտ ձայն։

—Հայրիկս է կանչում,—պէտք համարեց բացատրել Աստղիկը և շտապով գնաց դէպի հայրը։ Ես նայում էի նրա դալար իրանին, նրա հողմածածան մաղերին, տեսայ յետոյ, թէ ինչպէս հայրը բռնեց նրա ձեռքից, և երկուսով միասին վար իջան դէպի նաւի խորքը։ Քառասունից անց մի մարդ էր Աստղիկի հայրը, հաստ ընչացքներով, ածիլած երեսով և խոր ընկած այտերով։ Դա մի դէմք էր, ուր այնպէս որոշ կերպով դրուած էր թափառական կեանքի կնիքը։ Նա էր, որ ուզում էր փոքրիկ աղջկան երկիր տանել, յոդնած էր օտար երկընքի տակ և դադար ու հանդիսաւ էր ուզում երեւի։ Ափերը, ափերն են քաշում, մտածում էի ես, սոսկումով, ոճիրներով պղծուած ափերը։ Նաւը բրքում էր ծովի կուրծքը, ալիքները հեծեծում էին նրա տակ և հակառակ կողմից դուրս պրճնում նզովքով, ձկները շարունակում էին վազել նրա յետելից՝ աշխատելով իրարից առաջ անցնել։ Նայում էի և վերստին մտածում փոքրիկ աղջկայ մասին, որ փախչում էր ափերից, որ կ'ուզէր միշտ տարուել այս ձկների հետ հեռու, հեռու... նրա

երազուն աչքերը, գունատ դէմքը, գանգրահեր դլուխը
իմ աչքի առաջն էին. նա այժմ ապրում էր իմ հօգում,
և ես ցաւում էի, որ չսղմեցի կրծքիս այն փոքրիկ գը-
լուխը, և պինդ պինդ-չհամբուրեցի այն երազուն աչքե-
րը, ուր վառում էր մի ըմբոստ տենչ Ծովի աղջիկն էր
նա:

Մութն ընկաւ, անաստղ, մռայլ մի դիշեր էր, որ
իջաւ ծովի վրայ. սև երկինք և սև ծով գրկուեցին, և
ոչ մէկը լուռ չէր, երկուսն էլ մռմռում էին, ներքեւում
անհանդիստ էին ալիքները և վերում քամիները: Եւ
խաւարը անքուն հսկում էր նրանց վրայ. մէկ նաւն էր
լուսաւոր. նրա բազմաթիւ ճրադները որպէս խաւարի
մէջ թարթող աչքեր տարւում էին ջրերի վրայից վախ-
լուկ, յուսահատ փայլով: Ճամբորդները մէկիկ-մէկիկ վար
իջան տախտակամածից և թաղուեցին նաւասենեակնե-
րի խօրքում: Ես մնացի մենակ և ականջ էի դնում ա-
լիքների ձայնին և կայմերի յուսահատ ճռուցին: Ծովն
ու երկինքը ապրում էին մի թափով, որի առաջ և' ես,
և' իմ ուղեկիցները, և' մեր նաւն ամբողջ ոչնչութիւններ
էինք: Եւ այն գիտակցութիւնը, թէ մենք բոլորս ոչինչ
ենք ընութեան տուած, որ մենք միայն վայրկեաններ
ենք տիեզերական ոյժերի յաւկտենականութեան հան-
դէպ, իմ հօգին համակեց մի խորունկ վշտով: Ինձ թը-
ւում էր, թէ ալիքներն ու քամիները իրանց անդադը-
րում ու հզօր մոնշինով հեգնում էին մեղ, մեր եղիե-
լի գոյութիւնը, որ տիեզերքի լայնութեան մէջ տեղ ու
դադար չենք գտնում, փախչում ենք, փախչում և չենք
աղատուում այս սև երկնքի պէս մեր գլխին կախուած-
սև ճակատագրից: Լինել այդքան չնշին և այդքան դըժ-
բախտ. ինչո՞ւ: Դլուխս ձեռքերիս մէջ առած և զոյդ-
արմունկներովս յենուած նաւի վանդակապատին՝ ես
նայում էի դէպի խաւարը, և իմ հայեացքը թոյլ բազկով
ձգուած նետի պէս չէր կարողանում պատռել դիշերա-
յին սևի թանձրութիւնը և մեր ճրագների լոյսի հետ
մեռնում էր հէնց իմ ոտների տակ: Հոգիս էր միայն,

որ տարւում էր հեռու, հեռնւ և դարձեալ սաւառնում
էր ծանօթ ափերի, ծանօթ պատկերների վրայ։ Եւ նը-
րանք բոլորը վհատեցուցիչ էին, ճնշող, ոչինչ լուսաւոր,
ոչինչ միսիթարական։ Մէկը կամացուկ դիպաւ թւեիս.
կողքիս կանգնած էր փոքրիկ աղջիկը։

—Դու դեռ չես քնել, իմ փոքրիկ։

—Զէ, ես նայում էի հեռուն... մերոնք չեն քնել...

քունս չի տանում... շատ մութ է... յետոյ ջրերը այն-
պէս ձայն են հանում... մայրս էլ տնքում է շարունակ։

—Վախեննում ես ջրերի ձայնից։

—Զէ, չեմ վախում, ականջ եմ դնում. այնտեղ
վարժապետին էլ էի ականջ դնում։

—Ի՞նչ վարժապետ։

—Չես ճանաչում մեր վարժապետին, նա մերոնց
բաներ է պատմում, այ, նա այնաեղ է,—նա ցոյց տուեց
տախտակամածի խորքը,—ականջ դիր։

Մենք լոեցինք երկուսս էր. քամին մերթընդմերթ
հասցնում էր մեր ականջին մէկ երկերուող ձայն,
մերթ յստակ, մերթ խեղդուած և կոշտ, բայց միշտ
լալկան ու ցաւոտ։ Ալիքների մոնշւնի և հեծեծանք-
ների մէջ այդ ձայնն իր առաձին տեղը, իր առանձին
շեշտն ունէր, ուր աւելի ցաւ կար, բան այս խաւարի
և այս սե գիշերուայ մէջ։

—Գիտես ինչ, նա այնպիսի բաներ է պատմում...
մարդու լացը գտլիս է... մայրս էլ շարունակ տնկում
է, միշտ հարցնում է, թէ երբ կը համնենք... դու չգի-
տես, մենք ե՞րբ կը համնենք. տատս սպասում է։

—Վաղը առաւօտ դու կը համնես քո տատին։

—Իսկ նաւը։

—Նա էլի կ'երթայ, կ'երթայ ծովերով հեռու ու
հեռու։

—Դու էլ կ'երթաս։

—Հա, ես էլ կ'երթամ, բանի նաւը գնայ. կ'ուզին
երթալ ինձ հետ։

—Կ'ուզեմ, ես շատ եմ ուզում այսպէս գնալ, բայց

մայրս... նա այնպէս տնկում է, ուղում է երկիր հառնել, և տատս սպասում է:

Քամին մեղմացաւ, ես այժմ որոշ ու յստակ լսում էի վարժապետի ձայնը. նա ինչոր պատմում էր, ինչ որ անիծում, և նրա խօսքերը ընկնում էին այրող կայծերի պէս, որոնցից կարծես խաւարն էր գողում: Դա մի ձայն էր, որ թափանցում էր մարդու հոգու խորքը, խառնում, քրքրում, ցաւեցնում էր և այնուամենայնիւ հաճելի էր լսել:

Իմ փոքրիկ ուղեկցուհու փոյթը չէր սակայն, նա վերստին կախել էր իր գանգրահեր գլուխը վանդակապատից վար և նայում էր սև ջրերին, որոնք աղմկում էին նաւի տակ: Բայտ երեսյթին նա բոլորովին ուրիշ բան էրմտածում:

—Աստղիկ, այ Աստղիկ, - լսուեցնոյն խռպոտ ձայնը: Աղջիկը ցնցուեց:

—Հայրս գարձեալ կանչում է, —ասաց նա վհատձայնով, —ես գնում եմ. տես՝ վարժապետն ինչպէս է պատմում, էլի այնպիսի քաներ է ասում, մարդ գողում է, —աւելացրեց նա և շտապով ծածկուեց իմ աշքեց:

Ես քայլեցի նրա յետեկից, գնացի այնտեղ, ուր լրաւում էր վարժապետի ձայնը: Թուով տասն-տասնհինգ տղամարդ, հասակաւոր, ջահիլ, մռայլ դէմքերով, դըլուխները կրծքներին բաշած կամ իրար կողքի, իրար վրայ թեք ընկած, նստած էին տախտակամածի վրայ երանց այլանդակ կապոցների ու բեռների մէջ: Նրանց կենտրոնում մի բարձր կապոցի վրայ աղօտ կերպով ծրագրում էր մի ուրիշը, որ ըստ երեսյթին երկար բազուկներ ունէր և նոյնպիսի ոտներ, որ նա երկուտակ ծալել էր, ծնկները գուրս ցցած: Դէմքի գծագրութիւնը շատ որոշ չէր, նկատում էր միայն երկար սրածայր միրուքը, և աշքերի վրայ ամսի պէս իշնող թաւ յօնքերը, որ այնպէս մռայլ տեսք էին տալիս նրան: Առանց մօտիկից ծանօթ լինելու կարելի էր ասել, որ նա մէկն էր այն թափառական, անհանդիստ դոյսւթիւններից,

որոնց հայրենիքը կապուած էր անց կրունկներին, և ուրժնք կարծես բամիներից են հարցնում իրանց կեանքի անվերջ ճանապարհը:

—Քուներնիս չի տանում, ասա, վարժապետ, օղորմի քո հօրը,—կրկնում էր բազմութիւնից մէկնումէկը ամեն անդամ, երբ վարժապետը յոդնած կամ ձանձրացած, հանդարտութեամբ քաշում էր իր չոր ծնկների վրայ երկար, մինչև գետինը հասնող վերարկուի փէշերը, ձեռքերը խաչում կրծքին և զլուխը բաշ ձգած լուռ թաղւում էր խոհերի մէջ:

—Ասա, վարժապետ, օծֆ...

Եւ վարժապետը վերսախն սկսում էր.

«Ես փնդրում էի բեկորները, իսկ նրանք շատ հեռանւ են ընկել իրարից և ամենքը մռմուռ են քամում, ամենքից վշտի մուխ է բարձրանում պալան-պալան։ Ես միշտ տեսնում էի այդ մուխը, ուր և լինէր, որ հորիզոնի, որ երկնքի տակ ասես, ես նրան ճանաչում էի. Նրա գալարներն աւելի շատ են, ինչպէս ցաւած աղիքներ, դոյնն աւելի սե է։»

«Ես փնդրում էի բեկորները և միշտ գտնում էի նրանց։ Ես խօսում էի նրանց ականջին, ժպտում կամ լալիս էի նրանց հետ։ Եւ որքան շատ են, Տէր Աստուած և ուրեմն են ընկել։ Ես ուրեմն եղայ...»

Անապատների բոցոտ արեւը իր կիղիչ շնչով որքան է լիղել այս խեղճ դանդս։ Լեռներում ու ձորերում, ծովերի վրայ և մեծ ճանապարհներում բամիները որքան են ծեծել այս խեղճ թիկունքս։ Թիւերս բեռ դարձան յոդնած ուսերիս և մարմինս ծանր էր դալիս տառապած ուսներիս, բայց ես քայլեցի, քայլեցի բեկորների յետևից։ Եւ ամեն տեղ նոյնն էր աշխարհը, եղբայրներ վայ յաղթուածին, վայ անդօրին։»

«Ճակատս մխիրների մէջ մաշուեց, և ուսներս մեծ ճանապարհների քարերի մէջ փշրուեցին, երբէք միւնոյն տեղում այս դժբախտ դլուխս երկու անդամ չհանդըսաւ, և երբէք արևի առաջին շողը միւնոյն հորիզո-

նի տակ երկու անգամ իմ աչքերին չփայլեց: Բոլոր գիշերներն իրանց խաւարն ունին, բոլոր երկինքները նոյն աստղերը կամ նոյն ամպերը, և բոլոր հորիզոնների տակ մարդիկ նոյն են. ոճիրները նրանց հետ են ծնուած, և ախտերը նրանց եղբայրներն են: Տօթ գիշերներին պապակած օձերը կողք-կողքի են սողում լիզերու համար ցողից խոնաւացած խոտերը, ցուրտ ձմրանը նրանք իրար գալարուած են պառկում հողի տակ. մրրիկի ժամանակ սոված գայլերն ու բորենիները ձիւն ցանելով իրանց շուրջը միասին են դուրս գալիս որս ճանկելու, գիշակերները միասին են քրքրում մեծ անապատում ընկած ուղտերի դիակիները, քամիները մէկտեղ են մռնչում ժայռերի կատարներին և այրերում, ալիքները եղբօր պէս են հեծեծում փոթորիկների տակ, բայց մարդիկ ամեն տեղ կրծոտում են իրար ատամներով, կատաղութեամբ թաղում են իրար կոկորդի մէջ ոսկրոտ մատները և հրճուում ու քրքջում են նմանի անկման առաջ. ես ձեզ ասում եմ, ամեն տեղ նոյնն է աշխարհը, եղբայրներ, վայ յաղթուածին, վայ անզօրին:

«Եւ գիշերները օտարի՛ դռներում... ես սողում էի մեղմիւ, վախով, վիրաւորանքի և անարդանքի երկիւ-ղով. չէ՞ որ աներում սովորաբար մարդիկ են ապրում, որոնք կծել գիտեն: Սողում էի անձրեսի ու ձիւնի տակ, թրջուած, դողալով ու դժբաղդ, և ատամներս զարկւում էին իրար ցրտից, ես հեծեծում էի պատերի տակ՝ թափառական քամու հետ միասին, որ նոյնպէս մի ճեղք էր փնդրում ներս սողալու համար: Եւ դռները փակւում էին իմ առաջ: Այն ժամանակ ես ընարում էի կորած-մոլորուած խրճիթները, ուր աղօտ ճրադը հազիւ էր պլազում, ուր կեանքը խեղճութեան բեռի տակ հաղիւ էր համարձակւում մեղմիւ հեալը Այնտեղ էի ապաստան գտնում, ուր զեղիսութիւնը անգիթութեան հետ թունաւոր օձի պէս չէին գալարուել անհիւրընկալ շեմքի տակը Եւ կծկւում էի մինչև լոյս, ապա կրկին քայլում դէպի նորանոր հորիզոններ, ուր բեկորներն էին

դաղար առել և ուր միում էր նրանց ցաւը՝ է՛հ, ինչեր տեսայ. մի օր բանտում ես լսում էի, թէ ինչպէս հարեւան սենեակում մի կին երկունքով բռնուած, անձար ու մենակ, մոնչում էր ցաւից, անիծում էր իր արդանդի պտուղը, և երկինքը, և աշխարհը, եղունգներով չանգուտում էր պատերը՝ կարծես իր գլխին փուլ բերելու համար՝ Եւ նրա աղաղակը լսում էր ինչպէս անդունդներից, խուլ, ցաւադին, և այն հչ թէ մարդկային կոկորդից էր դուրս գալիս, այլ թւում էր, թէ բաց կրծքի մէջ պատառուած սիրտն էր ճշում։ Սոսկումից ու ցաւից մաղերս դիզանում էին, և ես գլուխս պատերին էի զարկում, որ զանգս փշուի, այդ աղաղակները չաեմ։ Յետոյ ամեն ինչ լրեց. տարաբախտ մայրը մեռած երեխայ ծնեց ու մեռաւ։ է՛հ, եղբայրներ, հաւատացէք ինձ, աշխարհն ամեն տեղ նոյնն է, վայ յաղթուածին։ Թունոտ հոգիներ, քար սրտեր, ախտեր ու ոճիրներ, և այս բոլորի վրայ մի կոկիկ փայլուն դիմակ, որ ժպտում է, ժպտում և խածնում։ Գնում էք, լաւ էք անում, որ գնում էք, թող ես միայն թափառեմ։

Ես այլ ևս չէի լսում նրան. այդ ձայնը, այդ տարաբախտ կնոջ պատմութիւնը իմ մէջ յարուցեց հազար ու մի վերյուշեր, մի ամբողջ կեանք ազօտ, մշուշապատ պատկերներով ցցուեց իմ առաջ։ Այդ մարդը, այդ տարօրինակ, կէս-խենթ, կէս-փիլիսոփիա այդ վարժապետը ինձ օտար, անծանօթ չէր թում։ Ո՞ւր եմ տեսել և նրբ։ Նա վերսկսեց իր թափառական կեանքի արկածներով հարուստ պատմութիւնը, իսկ ես փօրփրում էի անցեալս, փնդրում էի անցքեր, յիշողութիւններ, որոնց հետ այս երկարահասակ, նիհար մարդու պատկերը կապուած լինէր։ «Եէրվիշ, դէրվիշ», այս բառը յանկարծ մեխի պէս ցցուեց գլխումս, և ես սկսեցի անդադար կրկնել մտքումս, և նրա հետ այնքան յուշեր պաշարեցին ուղեղս. «դէրվիշ, դէրվիշ», սա անշուշտ նա է, նոյն հասակը, նոյն միրուքը անխնամ ու երկար, նոյն չորացած ձեռները, որոնք անդադար քաշըցում են երկար

Ներարկուի փէշերը։ Դէրվիշ, նա թափառում էր գիւղերում, դժբախտ ու մռայլ, յաճախ քաղցած ու անսապաստան, պատմում էր արկածներ, անօրինակ աւ սարսափելի, և միշտ ասում էր, թէ ինքը փնդրում է «բեկորները» մեծ մարմնի։ Մարդիկ լսում էին, գլուխները թափահարում, և բողոքն, ինչ նա ասում էր, համարում էին խենթի զառանցանք կամ մտացածին։ Եւ այդ կնոջ պատմութիւնը, և՛ դրա նմանները նաքանի՛ անդամ էր պատմել։ Անուն չունէր, թափառական կեանքը նըրան կնքել էր «դէրվիշ» անունով, և այդպէս էլ սիրում էր ինքնիրան կոչել։

Եւ մի օր, մի անիծուած օր, ես իմացայ փորձով, թէ որքան ճշմարտութիւն կայ այդ անօրինակ մարդի՛ սարսափելի պատմութիւնների մէջ։

Ա. ԱՀԱՐՈՒՆԵԱՆ

(Պլ շարունակուի)